ԲԱԺԻՆ 6. ԱԴԱՊՏԻՎ ՍՊՈՐՏԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՀՏԴ 796.01 DOI: 10.53068/25792997-2022.2.6-215

ՀՀ- ՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱԴԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Դասախոս Ա.Մ. Գաբրիելյան,
դասախոս Ս. Հ. Ջեյրանյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E-mail: angela.gabrielyan@sportedu.am,
siranush.jeyranyan@sportedu.am

Առանցքային բառեր: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաներ, ադապտիվ ֆիզիկական կուլտուրա (ԱՖԿ), զարգացման կենտրոններ, ԱՖԿ մասնագետներ:

Հետազոտության արդիականություն: Հարկ է նշել, որ ֆիզիկական կուլտուրան նպաստում է ոչ միայն երեխայի առողջության ամրապնդմանը, շարժողական կարողությունների զարգացմանը, այլև խթանում է անձի ներդաշնակ ձևավորումը[3]: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների համար ֆիզիկական կուլտուրան ունի շատ մեծ շտկող-զարգացնող ազդեցություն: Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի սկզբունքներից մեկն այն է, որ մանկավարժական ներգործությունները ուղղված են ոչ միայն զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ֆիզիկական և հոգեկան թերությունների հաղթահարմանը, այլև ճանաչողական գործունեության, հոգեկան գործընթացների, բարոյական հատկությունների զարգացմանը, շարժողական ակտիվության բարձրացմանը, երկրորդական խնդիրների կանխարգելմանը [5]:

ՀՀ կառավարության կողմից որդեգրած համընդհանուր ներառականության ռազմավարության շրջանակներում ԿԱՊԿՈՒ երեխաները ներառված են կրթական ոլորտում, հաճախում են նախադպրոցական հաստատություններ և դպրոցներ, որտեղ և իրականացվում է նրանց ֆիզիկական դաստիարակությունը: Փորձը ցույց է տալիս, որ ԿԱՊԿՈՒ

երեխաները ոչ լիարժեք են ներգրավված ֆիզիկական կուլտուրայի դասերին և պարապմունքներին: Սակայն, եթե նույնիսկ ենթադրենք, որ Ֆիզիկական կուլտուրայի դասերին ներգրավումը լիարժեք է իրականացվում, միևնույն է դա բավարար չէ ԿԱՊԿՈՒ երեխաների ֆիզիկական դաստիարակության պահանջմունքը բավարարելու համար: ԿԱՊԿՈՒ երեխաների համար ՀՀ-ում գործում են նաև լրացուցիչ ծառայություններ մատուցող կազմակերպություններ, ինչպիսիք են՝ զարգացման և վերականգնողական կենտրոնները:

Դիտարկումները վկայում են, որ ԿԱՊԿՈՒ երեխաների մեծ մասը բացի կրթական հաստատություններից հաճախում է նաև նշված կենտրոններ, որտեղ ստանում են հոգեբանական, լոգոպեդական, սոցիալական, հատուկ մանկավարժական աջակցություն, սակայն ֆիզիկական դաստիարակությունն իրականացվում է ոչ բոլոր տեղերում: Ուստի, վերը նշված հիմնախնդիրների վերհանումն այսօր արդիական հարց է:

Հետազոտության նպատակը, խնդիրները: Բացահայտել ադապտիվ ֆիզիկական դաստիարակության նշանակությունը ԿԱՊԿՈՒ երեխաների զարգացման համար և գնահատել ԱՖԿ-ի հասանելիությունը ՀՀ-ում գործող լրացուցիչ ծառայությունների մատուցման կառույցներում:

Հետազոտության մեթոդներն ու կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ գիտամեթոդական գրականության և տեղեկատվության ուսումնասիրություն, հարցում, հարցազրույց, տվյալների վերլուծություն:

Հարցումն ու հարցազրույցը կազմակերպվել են «Քայլ առաջ» հասարակական կազմակերպությունում, որտեղ հաճախում են 5-12 տարեկան ԿԱՊԿՈՒ երեխաներ: Հարցմանը մասնակցել են ԿԱՊԿՈՒ երեխաների 23 ծնող, հարցազրույցն անցկացվել է 2 ԱՖԿ մասնագետների հետ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Ինչպես գիտեք, ԿԱՊԿՈՒ երեխաներն ունեն բժշկական և հոգեբանամանկավարժական տարբեր տիպի ախտորոշումներ, որոնցից են՝ աուտիստիկ սպեկտրի խանգարումները (ԱՍԽ), մտավոր հետամնացությունը, հոգեկան զարգացման հապաղումը (ՀԶՀ), մանկական ուղեղային կաթվածը (ՄՈՒԿ), գերակտիվության և ուշադրության պակասի համախտանիշը (ԳՈՒՊ), վարքի և հուզակամային ոլորտի այլ խանգարումները:

Գիտնականների և ոլորտի մասնագետների հետազոտությունները վկայում են, որ զարգացման խանգարումները միշտ ուղեկցվում են շարժողական ոլորտի թերզարգացմամբ: Այս երեխաները ֆիզիկական զարգացմամբ և ֆիզիկական պատրաստվածությամբ հետ են մնում

իրենց հասակակիցներից առնվազն մեկից երեք տարով, նրանց մոտ դիտվում են նաև ուղեկցող հիվանդություններ և երկրորդային խանգարումներ: Օրինակ՝ մտավոր հետամնացության դեպքում՝ բացի ճանաչողական ոլորտից վնասվում են ոսկրային, մկանային, ներզատական, զգայական համակարգերը, որի արդյունքում առավելապես տուժում է շարժումների կոորդինացիան, սահմանափակվում է լայնույթը, ստույգությունը, նկատվում է մկանային լարվածություն, խախտվում է հավասարակշռությունը և տարածության մեջ կողմնորոշման կարողությունը [4]: ԱՍԽ–ի դեպքում հիմնական խնդիրներն են՝ սոցիալական հաղորդակցման և համագործակցության անբավարարությունը, կրկնվող վարքը, խոսքի խանգարումները [7]:

ԱՍԽ ունեցող երեխաների զարգացումն աղավաղված է, տուժում են շարժողական կարողությունները, այդ թվում նաև՝ մանր շարժումները, ինչը մեծապես խոչընդոտում է կենցաղային հմտությունների ձևավորմանը: Շարժումները հաճախ թույլ են կամ ընդհակառակը՝ չափից ավելի լարված, կարծրատիպ անցումներով, արգելակումներով, քայլում են թաթերի վրա, ձեռքերի և ոտքերի աշխատանքը կոորդինացված չէ, դժվարացած է հավասարակշռության պահպանումը, խախտված է զգայական ինտեգրացիան [6]: Հյուսիսային Կարոլինայի (ԱՄՆ) Մանկական զարգացման ինստիտուտի կողմից 2014-ին անցկացված հետազոտությունների համաձայն՝ ֆիզիկական բեռնվածությունն օգնում է ԱՍԽ-ով երեխաներին հաղթահարել անցանկալի վարքը, կառավարել սեփական շարժումները, կարգավորել հոգեֆիզիկական տոնուսը, թուլացնել հուզական լարվածությունը[7]:

Այսօր ՀՀ-ում իրականացվում է ԿԱՊԿՈՒ երեխաների ներառական կրթություն, որի շրջանակներում պետք է բարելավվի նաև նրանց ֆիզիկական դաստիարակությունը, սակայն միայն կրթական հաստատություններում անցկացվող ֆիզիկական կուլտուրայի դասերն ու պարապմունքները բավարար չեն՝ ապահովելու նրանց շարժողական ակտիվության և ֆիզիկական բեռնվածության պահանջմունքը:

ԿԱՊԿՈՒ երեխաների մեծ մասը ստանում են լրացուցիչ ծառայություններ պետական և հասարակական կազմակերպությունների կողմից: Դրանցից են՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնները (ՏՄԱԿ), որտեղ նաև գնահատվում են երեխաների կրթական կարիքները, հասարակական կազմակերպությունները, վերականգնողական և զարգացման կենտրոնները:

Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի տվյալների՝ ՀՀ-ում գործում են հաշմանդամ երեխաների հիմնախնդիրներով զբաղվող 32-ից ավելի ՀԿ-ներ,

որոնցից 8-ն ունեն ֆիզկուլտուրասպորտային ուղղվածություն, այսինքն՝ այստեղ անցկացվում են ֆիզիկական կուլտուրայի պարպմունքներ, սպորտային մարզումներ, կազմակերպվում են սպորտլանդիաներ, ճամբարներ, սպորտային մրցումներ, դրանք են՝ «Սկարպ» ՀԿ, «Փյունիկ» ՀԿ, «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» ՀԿ, «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ, «Քայլ առաջ» Սոցիալական ՀԿ, «Սատար» ՀԿ, «Հաշմանդամային սպորտի հայկական ազգային ֆեդերացիա» (ՀՍՀԱՖ), «Հատուկ օլիմպիադաներ» ՀԿ:

ՀԿ-ներից չորսն ունեն վերականգնողական ծառայություններ («Արևածագ» ՀԿ, «Լուսաշող» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ, «Հայ մայրեր» ՀԿ, «Հույսի կամուրջ» ՀԿ)[1]:

ՀՀ-ում կան 19 պետական լինցեզավորված համայնքային մանկական զարգացման վերականգնողական կենտրոններ (ԵՋՎԿ), որոնք հիմնականում սպասարկում են համապատասխան մարզերից եկած երեխաներին: Դրանցում ներառված են 3 խոշոր կենտրոնները՝ «ԱրԲեՍ» ԱԿ իր մարզային մասնաճյուղերով (Գավառ, Իջևան, Արտաշատ, Գյումրի, Արմավիր), «Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոն», «Արմենակ և Աննա Թադևոսյանների բժշկական կենտրոն հիմնադրամ»: Այս վերականգնողական կենտրոններում որպես կանոն, բուժում են ստանում հիմնականում կոպիտ հենաշարժողական խնդիրներով, սովորաբար ՄՈՒԿ-ով երեխաները: Այստեղ կիրառվում են ինչպես ֆիզիոթերապիայի տարբեր ձևեր՝ կինեզիոթերապիա, ջրաբուժություն, ասեղնաբուժություն, մանուալ և ռեֆլեքսոթերապիա, այնպես էլ ֆիզիկական վարժություններ:

Ըստ «Սփյուռ» տեղեկատվական համակարգի 2021-ի տվյալների՝ ՀՀ-ում գործում են մոտ 130-ից ավելի պետական և ոչ պետական զարգացման կենտրոններ, որոնցից միայն 28-ում են իրականացվում ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներ[2], դրանցից են՝ «Լիթլ Ջիմ», «Էքս Էս Իմպուլս», «Իմ ուղին» և այլն: Այստեղ հաճախում են *հենաշարժողական ոչ կոպիտ խանգարումներով*, սակայն այլ խնդիրներով երեխաներ, որոնցից են՝ աուտիզմը, հոգեկան զարգացման հապաղումը, մտավոր հետամնացությունը և այլն:

Փաստորեն այս երեխաները, հաճախելով զարգացման կենտրոններ, չեն ունենում ֆիզիկական դաստիարակություն ստանալու հնարավորություն. մինչդեռ այն երեխայի կարողությունների առավելագույն զարգացման կարևոր գրավականն է: Այն որ ԱՖԿ-ն անգնահատելի է ԿԱՊԿՈՒ երեխաների համար, բացի հիղինակավոր գիտնականներից և ոլորտի առաջատարներից փաստում են նաև նրանց ծնողները և երեխաների հետ

աշխատող ԱՖԿ մասնագետները:

Այդ մասին են վկայում մեր կողմից «Քայլ առաջ» ՀԿ-ում ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հետ անցկացված պիլոտային հարցման արդյունքները: Կենտրոնում պարապող երեխաների 39,1%-ը հաճախում են մանկապարտեզ, իսկ 60,9%-ը՝ դպրոց: Նրանցից 82%-ը դպրոցներում և մանկապարտեզներում մասնակցում են ֆիզկուլտուրայի դասերին և պարապմունքներին: Սակայն ծնողների 75%-ը կարևոր է համարում երեխայի հավելյալ մասնակցությունը ԱՖԿ պարապմունքներին, 41%-ը նշում է, որ իրենց երեխաները ցանկություն ունեն պարապելու, իսկ 58%-ի կարծիքով իրենց երեխաները մեծ հաճույքով են մասնակցում պարապմունքներին:

Ծնողները նշում են, որ ԱՖԿ պարապմունքները դրական ազդեցություն են թողնում երեխաների հաղորդակցական կարողությունների զարգացման վրա՝ նրանք դիմում են մարզիչին, խաղերի ընթացքում շփվում են մյուս երեխաների հետ, սովորում են հայտնել իրենց ցանկությունները, այս ամենը շատ կարևոր է հատկապես ԱՍԽ-ով երեխաների համար: Ծնողները նկատել են, որ ֆիզիկական վարժությունների շնորհիվ երեխաները կարողանում են կողմնորոշվել տարածության մեջ, պահպանել հավասարակշռությունը, դարձել են ավելի ճկուն, հաղթահարել են վախի զգացողությունը, ինքնուրույն վազում են, ցատկում, բակում մասնակցում են շարժախաղերին: Նրանք նաև դրական են գնահատում պարապմունքների ազդեցությունը հուզակամային ոլորտի վրա՝ երեխաները կարողանում են ճիշտ և ժամանակին արտահայտել հույզերը, կառավարել դրանք, պարապմունքներից հետո նրանք ունենում են բարձր տրամադրություն: Վարքը ևս դրականորեն փոխվել է՝ երեխաները լսում և կատարում են հրահանգները, սպասում են իրենց հերթին, վերահսկում սեփական վարքը:

Ծնողների հետ անցկացված հարցումների կարևոր բացահայտումներից էր նաև այն, որ նրանց 76,4%-ը ցանկանում են իրենց երեխաներին ընդգրկել որևէ մարզաձևի մեջ (ֆուտբոլ, բասկետբոլ, լող, կարատե): Մասնագետները ևս նշում են, որ երեխաների մի մասի մոտ տեսնում են սպորտով զբաղվելու նախադրյալներ, սակայն կենտրոնում դեռևս չկան համապատասխան պայմաններ:

ԱՖԿ մասնագետների հետ հարցազրույցից պարզ դարձավ, որ կենտրոնում անցկացվում է թիմային աշխատանք, որում նաև կարևորվում է ԱՖԿ մասնագետի դերը: Յուրաքանչյուր երեխայի խնդիրները քննարկվում են, գնահատվում են նրա ֆիզիկական և մտավոր կարողությունները, վարքի առանձնահատկությունները և արդյունքում կազմվում է պարապմունքների անհատական պլան: Պարապմունքների արդյունավետությունը կախված է ինչպես երեխայի

խնդրի ծանրության աստիճանից, այնպես էլ երեխա-մասնագետ կապից, ճիշտ ընտրված մեթոդներից, մասնագետի պատրաստվածությունից:

Աշխատանքների հիմնական ուղղվածությունը շարժողական ոլորտի զարգացումն է և տարբեր շեղումների շտկումը: Զուգահեռաբար լուծվում են նաև անձի բոլոր կողմերի շտկման և զարգացման խնդիրները, ինչի մասին վկայում են նաև ծնողները:

Ընդգծենք նաև, որ այս ուղղությամբ հետազոտական աշխատանքները շարունակվելու են՝ մեծացնելով հարցվողների ընտրանքը:

Եզրակացություն: Այսպիսով՝ ընդհանրացնելով կատարված հետազոտության արդյունքները, կարող ենք եզրահանգել.

1. ԱՖԿ-ն դրական ազդեցություն ունի ԿԱՊԿՈՒ երեխաների շարժողական, ճանաչողական, հուզակամային, հաղորդակցական ոլորտների զարգացման վրա

2. ՀՀ-ում գործող զարգացման կենտրոնների մեծ մասում չեն իրականացվում ԱՖԿ պարապմունքներ:

3. Արտահայտված շարժողական խնդիրներ չունեցող, սակայն այլ խնդիրներով ԿԱՊԿՈՒ երեխաները չեն ստանում բավարար ադապտիվ ֆիզիկական դաստիարակություն:

4. ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները և երեխաների հետ աշխատող ԱՖԿ մասնագետները միակարծիք են ադապտիվ ֆիզիկական դաստիարակության կարևորության վերաբերյալ:

5. ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները հայտնում են ցանկություն, իսկ ԱՖԿ մասնագետները տեսնում են հնարավորություն այս երեխաներին ներգրավելու սպորտում:

Առաջարկություններ.

1. Անհրաժեշտ է բարձրաձայնել հետազոտության արդյունքում ստացված տվյալները և ձեռնարկել քայլեր՝ խրախուսելու ԱՖԿ-ի ներդրումը ՀՀ-ում գործող զարգացման կենտրոններում:

2. Զարգացման կենտրոններում ԱՖԿ-ի ներդրումը լայն հնարավորություն կստեղծի ԱՖԿ մասնագետների գործունեության համար:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն https://www.mlsa.am/?page_id=11618

2. «Սփյուռ» տեղեկատվական համակարգ https://www.spyur.am/am/home/search/?company_name=%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6+%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80&addres=

3. Воробьева И.Н., Гаджиев Г.Т. , Влияние физической культуры на умственное развитие школьников // Педагогические науки. Эл. Ресурс. 2018. Т.7.№4 (25), с. 65-67.

4. Дмитриев А.А., Физическая культура в специальном образовании: Учебное пособие для студ. высш. учеб. заведений. – М.: Академия, 2002, 176 с.

5. Кетриш Е.В., Андрюхина Т.В., Третьякова Н.В., Теория и практика инклюзивного образования (на примере физического воспитания). Учебное пособие, Екатеринбург, 2017, 114 с.

6. Плаксунова Э.В., Особенности двигательной сферы и психомоторики детей с аутизмом // Аутизм и нарушения развития.2008. Том 6, №3, с. 10–12.

7. Фомченко В.В., Кабачкова А.В., Возможности использования адаптивных форм физической культуры при расстройствах аутистического спектра // Материалы XI международной научно-практической конференции “Физическая культура, здравоохранение и образование”, Томск, 2017. с. 181-185.

ACCESSIBILITY OF ADAPTIVE PHYSICAL CULTURE IN INSTITUTIONS PROVIDING ADDITIONAL SERVICES TO CHILDREN WITH SPECIAL EDUCATIONAL NEEDS TROUGHOUT THE RA

Lecturer A. M. Gabrielyan,
Lecturer S. O. Jeyranyan
Armenian State Institute of Physical
Culture and Sport, Yerevan, Armenia

SUMMARY

Keywords: children with special educational needs (SEN), Adaptive Physical Culture (APC), development centers, APC specialists.

The research relevance. Adaptive Physical Culture (APC) has corrective and developmental significance for children with special educational needs. Total inclusion across the Republic of Armenia gives children with SEN opportunity to attend kindergartens and schools that encourage their involvement in physical education classes. Apart from educational institutions, rehabilitation centers, health camps and development centers also deliver additional services to children with special educational needs. Whereas not all institutions provide classes on APC. Hence, children with autism spectrum disorders (ASD), mental retardation and other disorders are deprived of the opportunity to meet the need for physical education to a proper degree.

The aim of the research is to disclose the importance of APC for the children with special educational needs, to assess accessibility of APC across the institutions providing additional services.

The research methods and organization involve study of scientific-methodical literature and information platforms, survey, interview, processing of the data obtained. The study was conducted in the NGO "Step forward". Parents of children with special educational needs and specialists within the field of APC got involved in the surveys and interviews.

The analysis of research results indicated that the scientists and leading specialists within the field share the identical mainstream regarding corrective and developmental value of APC for children with special educational needs.

The study of institutions providing additional services across the RA identified that out of 130 development centers only 28 offer classes on APC, thereby limiting the opportunities of children with SEN for physical education to a proper degree. Based on the results of a survey that involved parents of children with SEN and engaged in APC at the "Step forward" NGO, it turned out that 75% of respondents believe that physical education affects the development across all aspects of a child's personality - motor, communicative, emotional-volitional, behavioral, whereas 76.4 % express a desire to enroll their children in any kind of sport activities. APC specialists also outline the positive impact of classes on the development of skills and abilities of children by tracing prerequisites for enrolling these children in sport activities.

Conclusion. APC classes are not easily accessible for children with special educational needs. Thus, the parents of these children and experts agree upon the developmental importance of APC for this category of children. The introduction of APC within institutions providing additional education in the RA is underpinned and needed for expanding the scope of activities of APC specialists.

ДОСТУПНОСТЬ АДАПТИВНОЙ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ ДЛЯ ДЕТЕЙ С ОСОБЫМИ ОБРАЗОВАТЕЛЬНЫМИ ПОТРЕБНОСТЯМИ В УЧРЕЖДЕНИЯХ ДОПОЛНИТЕЛЬНЫХ УСЛУГ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

Преподаватель А. М. Габриелян,
преподаватель С. О. Джейранян
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

РЕЗЮМЕ

Ключевые слова: дети с особыми образовательными потребностями (ООП), адаптивная физическая культура (АФК), центры развития, специалисты по АФК.

Актуальность исследования. АФК имеет огромное коррекционно-развивающее значение для детей с ООП. В условиях всеобщей инклюзии в РА дети с ООП посещают детские сады и школы, где участвуют на занятиях по физкультуре. Кроме образовательных учреждений дети с ООП получают дополнительные услуги в реабилитационных центрах, санаториях, а также центрах развития. Однако далеко не во всех учреждениях проводятся занятия по АФК. Таким образом, дети с РАС, умственной отсталостью и другими проблемами лишены возможности удовлетворять в надлежащем объеме потребность в физическом воспитании.

Цель исследования. Выявить значение АФК для развития детей с ООП и оценить степень доступности АФК в учреждениях дополнительных услуг детям с ООП.

Методы и организация исследования. В исследовании использовались методы изучения научно-методической литературы и информационного пространства, опроса, собеседования, обработки полученных данных. Исследование проводилось в ОО « Шаг вперед». В опросах и собеседованниях участвовали родители детей с ООП и специалисты по АФК.

Результаты исследования. Анализ научно-методической литературы выявил однозначное мнение ученых и ведущих специалистов отрасли о коррекционно-развивающем значении АФК для детей с ООП. Изучение пространства учреждений РА по дополнительным услугам для детей с ООП выявило, что из почти 130-и центров развития лишь в 28-и из них проводятся занятия по АФК, тем самым ограничиваются возможности детей с ООП для получения физического воспитания в надлежащем объеме. По результатам опроса родителей детей с ООП, занимающися АФК в ОО « Шаг вперед», выяснилось, что 75% опрошенных считают, что физическое воспитание влияет на развитие всех сторон личности ребенка – двигательной, коммуникативной, эмоционально-волевой, поведенческой, а 76,4% изъявляют желание вовлечь своих

детей в какие-либо виды спортивной деятельности. Специалисты по АФК также отмечают положительное влияние занятий на развитие умений и навыков детей с ООП, а также прослеживают предпосылы возможности включения этих детей в спортивную деятельность.

Краткие выводы. Занятия по АФК малодоступны для детей с ООП, у родителей этих детей и специалистов по АФК совпадают мнения насчет важности АФК для развития этой категории детей. Обоснована необходимость внедрения АФК в учреждениях дополнительного образования РА, при реализации которого будет расширена сфера деятельности специалистов по АФК.

Հոդվածն ընդունվել է 31.03.2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 01.04.2022–ին: